ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 հունիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

85
(2751)

քՐ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱԼԻԵՎԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԸ

Ադրբեջանը ՀՀ-ին ստիպում է սահմանազատում, բայց ինքը ոչ մի երկրի հետ չի արել դա:

2021 թվականի մայիսի 12-ից, երբ ադրբեջանական զինված ուժերի զինծառայողները ապօրինի ներխուժեցին Հայաստանի ինքնիշխան տարածք, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման եւ սահմանագծման գործընթացի հարցը առաջին պլան մղվեց: Հայաստանը հարեւան որեւէ երկրի հետ սահմանների դեմարկացիա եւ դելիմիտացիա չի իրականացրել, թեեւ Իրանի, Վրաստանի եւ Թուրքիայի հետ տարածքային խնդիրներ չկան: Արեւելյան կողմից հարեւան Ադրբեջանը, օգտվելով այն հանգամանքից, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատում եւ սահմանագծում իրականացված չէ, գրեթե ամեն օր տարածքային նոր պահանջներ է ներկայացնում Հայաստանին: Ադրբեջանի բռնատիրական նախագահն էլ, կեղծ քարտեզներ վկայակոչելով, սպառնում է, թե Հայաստանը պետք է դեմարկացիան եւ դելիմիտացիան իրականացնի իրենց իսկ թելադրած պայմաններով, այն է՝ պետք է բացվի դեպի Նախիջեւան տանող ճանապարհը, երկրորդ՝ Լեռնային Ղարաբաղում չպետք է լինեն Հայաստանի զինված ստորաբաժանումներ, արցախցիները պետք է ստանան ադրբեջանական անձնագրեր: «Ժողովուրդ» օրաթերթը ադրբեջանագետ, պատմական գիտությունների թեկնածու Տաթեւիկ Հայրապետյանից հետաքրքրվեց՝ արդյոք Ադրբեջանն իր հարեւան մյուս երկրների հետ դեմարկացիա իրականացրել է, որ հիմա փորձում է ճնշումներ գործադրել Հայաստանի վրա: Փորձագետը մեզ հետ զրույցում պարզաբանեց՝ Ադրբեջանը չունի դելիմիտացված սահման իր հարեւան երկրների՝ Վրաստանի եւ Ռուսաստանի հետ, ընդ որում՝ Վրաստանի հետ լուրջ հակասություններ կան այդ առումով: Ինչ վերաբերում է Իրանի հետ սահմանին, ապա դրանք սահմանազատվել են՝ խորհրդային քարտեզների համաձայն, բայց Իրանի հետ էլ կան խնդիրներ՝ Կասպից ծովի բաժանման, ռեսուրսների վերահսկման առումով, ուստի այդտեղ էլ առկա են լուրջ հակասություններ: Իսկ ինչու՞ է սպառնում Հայաստանին՝ ստիպելով իր իսկ պայմաններով դելիմիտացիա իրականացնել. «Ադրբեջանական կողմը, չունենալով դելիմիտացված սահման իր հարեւանների հետ, հսկայական ճնշում է գործադրում Հայաստանի վրա, որովհետեւ Հայաստանի հետ կապված հստակ ծավալապաշտական նկրտումներ ունի: Օրեր առաջ էլ Ադրբեջանի նախագահը խոստովանեց, որ իրենք միջազգային իրավունքը չեն հարգում, գերական ուժն է իրենց համար, եւ ուժով պետք է խնդիրները լուծեն, իսկ մնացածը լիրիկական զեղումներ են: Բնականաբար, իրենք բանակցում են, այդ գործընթացներն օգտագործում են իրենց դիրքերն ամրապնդելու համար, բայց հետո գնում են նորանոր էսկալացիաների»:

Հավելենք, որ արդեն երկու օր է, ինչ Երասխի հատվածում ժամերով կրակահերթ է արձակում Ադրբեջանը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել է, որ հունիսի 16-ին, 17-ին ՔՊ-ականները քաղաքական ժողով են անելու Դիլիջանում՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: Երկարատեւ բանակցություններից հետո ՔՊ-ականները երկուշաբթի օրը տեղի ունեցած վարչության նիստում Նիկոլ Փաշինյանի հետ հստակեցրել են քաղաքական ժողովի օրակարգը: Այսպիսով, ՔՊ-ական մեր աղբյուրներից տեղեկացանք, որ քաղաքական ժողովի օրակարգում հիմնականում լինելու են ավագանու ընտրությունների մասնակցության հետ կապված հարցերը: Բանն այն է, որ ՔՊ-ականները գրեթե կասկած չունեն, որ իրենց թեկնածուն՝ Տիգրան Ավինյանը, հաղթելու է, բայց, մյուս կողմից, իշխանականներն իրենց առջեւ նպատակ են դրել գոնե ֆորմալ մրցակցային ֆոն ապահովել Ավինյանի համար, որպեսզի, նախ, միջազգային հանրությունը հերթական զեկույցը չգրի իրենց ոչ ժողովրդավար լինելու մասով, ապա ընդդիմությանը խոսելու առիթ չտան, թե ոչ հավասար պայմաններում են անցել ընտրությունները: ՔՊ քաղաքական ժողովի օրակարգում լինելու են կուսակցության մարտավարության, մարզային կառույցների գործունեության հետ կապված հարցերը: Անվտանգային հարցերը նույնպես լինելու են քաղաքական ժողովի օրակարգում, բայց ինչպես ՔՊ-ական մեր աղբյուրները փոխանցեցին, առաջնային լինելու են քաղաքական եւ ներկուսակցական հարցերը: Ինչպես մեզ փոխանցեցին, նաեւ քաղաքական ժողովի հրավիրյալների ցանկը դեռ վերջնական հստակեցված չէ. դրա շուրջ դեռ քննարկումներ են գնում:



Ռուսաստանի Դաշնության վարքը մշտապես քննադատող ՀՀ իշխանությունները շարունակում են այդ երկրի հետ հարաբերություններն առաջնահերթ համարել: «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026) եւ 2022 թվականի կատարման ընթացքի ու արդյունքների մասին զեկույցը, տեղեկացավ, որ արտաքին քաղաքականության բլոկում ամենամեծ հատվածը նվիրված է հենց հայ-ռուսական հարաբերություններին: Այն ներկայացված է հենց սկզբում՝ երեք էջի սահմաններում: Եվ սա՝ այն դեպքում, երբ, օրինակ, Հայաստան-ԱՄՆ, Հայաստան-Ֆրանսիա հարաբերություններին գրեթե մեկ էջ է հատկացված: Ամենաուշագրավն էլ այն է, որ Հայաստան-Չինաստան հարաբերությունները ներկայացված են ընդամենը ութ նախադասությամբ: Հարաբերությունների նկարագրության քանակով մեծ է նաեւ Թուրքիայի հատվածը: Հավելենք, որ ԵՊՀ-ում էլ հունիսի 13-ին մեկնարկել է հայ-ռուսական գիտակրթական ֆորումը, որի կազմակերպման եւ անցկացման համար Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը մոտ 23 միլիոն դրամ է տրամադրել Երեւանի պետական համալսարանին: Այս ֆորումի համար 100 անձ է ՌԴ-ից ժամանել: Այս ամենի ֆոնին ՀՀ իշխանությունները մշտապես դժգոհում են:

Սնանկության դատարանի դատավոր Սամվել Թադեւոսյանի կողմից երեկ ներկայացված ազատման դիմումը խորը արմատներ ունի: Բանն այն է, որ ԲԴԽ-ն քաղաքացիական եւ սնանկության դատարանի 4 դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ է հարուցել, ու, ըստ դատական համակարգում տարածված լուրերի, լավ օրեր չեն սպասվում այն դատավորներին, որոնց մասով էլ հարուցվել են կարգապահական վարույթները: Այդ դատավորներից մեկը Սամվել Թադեւոսյանն է, որի մասով հարուցվել է կարգապահական վարույթ, ու, ըստ էության, նա չսպասեց ԲԴԽ-ի՝ հունիսի 19-ի նիստին եւ հետագա քննության որոշմանը ու մեկ քայլ առաջ անելով՝ լքեց դատական համակարգը: Նշենք, որ Թադեւոսյանի հրաժարականի մասին հայտնեց Դատական դեպարտամենտը՝ հայտնելով, որ հրաժարականի դիմումը օրենքով սահմանված կարգով քննարկվել է Խորհրդի կողմից, եւ համապատասխան որոշմամբ դատավոր Ս. Թադեւոսյանի լիազորությունները համարվել են դադարած: Իսկ ովքե՞ր են այն դատավորները, որոնց մասով եւս ԲԴԽ-ն հարուցել է կարգապահական վարույթներ, ու հունիսի 19-ին այդ առիթով առաջին նիստն է: Սամվել Թադեւոսյանից բացի, թիրախում քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանն է, իսկ մյուս երկու դատավորները Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Տիգրան Պետրոսյանն ու Արտակ Բարսեղյանն են: Հիշեցնենք՝ Եվրոպական դատավորների միությունը օրերս բավականին կոշտ հայտարարություն էր տարածել Հայաստանի դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական գործընթացների մասով՝ դրանք համարելով ճնշում անկախ դատական համակարգի վրա:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ՝ ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանը եւ Ադրբեջանը տեւական ժամանակ է՝ բանակցություններ են վարում խաղաղության պայմանագրի շուրջ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանն ասում է՝խաղաղության պայմանագրի որոշ դրույթների շուրջ համաձայնություններ կան, բայց կան նաեւ սկզբունքային դիրքորոշումներ, որոնց շուրջ կողմերը չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ:

-Պարոն Խանդանյան, արդեն տեւական ժամանակ է՝Հայաստանը եւ Ադրբեջանը պետական մակարդակում բանակցություններ են վարում Մոսկվայում եւ Վաշինգտոնում ու ասում են, որ բանակցությունները ընթանում են հիմնականում խաղաղության պայմանագրի շուրջ: Այժմ ի՞նչ փուլում են բանակցությունները, արդյոք կողմերը մո՞տ են պայմանագրի կնքմանը: Եթե մոտ չեն, ի՞նչ տարաձայնություններ կան:

-Վերջին մի քանի ամսվա ընթացքում բանակցությունների դինամիկան բավական արագ էր թե՛ արտգործնախարարների եւ թե՛ երկրի ղեկավարների մակարդակով. դա գաղտնիք չէ: Այո՛, խաղաղության պայմանագրի որոշ դրույթների վերաբերյալ համաձայնություններ, մոտեցումներ ու դիրքորոշումներ կան, բայց կան սկզբունքային դիրքորոշումներ, որոնք մեզ համար շատ կարեւոր են, եւ հենց այդ դիրքորոշումների շուրջ է խոսակցությունը: Եթե դրանք բաժանենք, օրինակ, երեք խմբի, առաջինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հայության իրավունքների եւ անվտանգության մեխանիզմի հարցն է: Պետք է ապահովվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հայության իրավունքն ու ապահովությունը: Երկրորդը սահմանի հարցն է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, թե ինչպես է իրականացվելու սահմանազատման գործընթացը, եւ երրորդը խաղաղության պայմանագրի կենսունակության հարցն է: Այդյոք խաղաղության պայմանագիրը ապահովելո՞ւ է խաղաղություն դրա ստորագրումից հետո:

-Դուք՝ որպես Արտաքին հարցերի հանձնաժողովի նախագահ, ի՞նչ եք կարծում, պայմանագիրը կապահովի՞ խաղաղություն, քանի որ տեսնում եք, որ Ադրբեջանը տարբեր հարթակներում ձեռք բերված պարտականությունները չի պահում, խախտում է հրադադարը:

-Ես կարծում եմ, որ խաղաղության պայմանագրի պահպանման համար պետք է կայուն մեխանիզմներ լինեն, որոնք կապահովեն խաղաղության պայմանագիրը իրականացնելիս ծագած վեճերի լուծումները: Ըստ էության, պետք է նման միջազգային մեխանիզմ լինի, որը անընդհատ ուշադրության կենտրոնում կպահի տարածաշրջանը, եւ երբ որ կառաջանան վեճեր, եւ Ադրբեջանը կփորձի չկատարել մեր պայմանավորվածությունները, այդ մեխանիզմը կարգավորի այդ ամենը:

ՀՐԱՏԱՊ

ԱՀԱԶԱՆԳ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Ադրբեջանը կրակ է բացել քաղաքացիական օբյեկտների վրա, վիրավորում են ստացել օտարերկրյա քաղաքացիներ. ահազանգ միջազգային գործընկերներիս:

Ադրբեջանի ՋՈՒ-ն այսօր (երեկ-խմբ.)՝ ժամը 11:45-ի սահմաններում, կրակ է բացել Երասխում օտարերկրյա ներդրումների միջոցով կառուցվող մետալուրգիական գործարանի ուղղությամբ, ինչի հետեւանքով վիրավորում են ստացել օտարերկրյա 2 քաղաքացի:

Հունիսի 13-ին Ադրբեջանի ՋՈՒ ստորաբաժանումները, հերթական անգամ խախտելով հրադադարը, տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից կրակ են բացել

Արցախի հետ շփման գծի հյուսիսային, արեւելյան եւ հարավարեւմտյան,

Տրետուքի, Սոթքի (կիրառել են նաեւ ականանետ),

Երասխի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ: Երասխի ուղղությամբ Ադրբեջանի ՋՈՒ կրակի հետեւանքով վնասվել է քաղաքացիական ավտոմեքենա եւ այլ օբյեկտ:

Գրություններ եմ հասցեագրել միջազգային գործընկերներիս՝ նշելով, որ Ադրբեջանը կոպտորեն խախտում է միջազգային մարդասիրական իրավունքի դրույթները, 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը, առհասարակ, մարդու համընդհանուր իրավունքները, ինչպես նաեւ խոչընդոտում է խաղաղության հասնելու միջազգային բոլոր ջանքերը:

Պահանջել եմ հրապարակային գնահատական հնչեցնել Ադրբեջանի հանցավոր վարքագծի վերաբերյալ եւ ձեռնարկել քայլեր՝ Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու ուղղությամբ»:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՔՊ-ՈՒՄ

ԱԺ խորհրդի որոշմամբ՝ փոփոխություններ են արվել ԱԺ 8-րդ գումարման բարեկամական խմբերի կազմում:

Այսպիսով, կատարվել են հետեւյալ փոփոխությունները՝

1. Հայաստան-Իրան բարեկամական խմբում Մարիա Կարապետյանին կփոխարինի Դավիթ Դանիելյանը:

2. Հայաստան-Ղազախստան բարեկամական խմբում Վլադիմիր Վարդանյանին կփոխարինի Նարեկ Բաբայանը:

3. Հայաստան-Ֆինլանդիա, Նորվեգիա բարեկամական խմբում իմքայլական նախկին պատգամավոր Անուշ Բեղլոյանին կփոխարինի Վիլեն Գաբրիելյանը:

Իսկ, ահա, Հայաստանի Ազգային ժողովի եւ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովում համալրում կա. հանձնաժողովի կազմում ընդգրկվել է նաեւ ՔՊ-ական պատգամավոր Շիրակ Թորոսյանը:

Նյութերը՝ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ

ՕՊԵՐԱՏԻՎ ՀԱՄԱՐԱՆԻՇՆԵՐ

Կարեն Անդրեասյանը խորհրդականին օպերատիվ համարանիշներ է տվել: Ո՞վ է վերջինս: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի ամուսինը՝ Արշակ Վարդապետյանը, որը ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի խորհրդականն է, օպերատիվ համարանիշներով է շրջում: Ավելին՝ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Արշակ Վարդապետյանը ԲԴԽ-ում միակ խորհրդականն է, որն ունի ավտոմեքենայի օպերատիվ համարանիշներ, եւ հարց է առաջանում՝ ինչպես են այդ համարանիշները հայտնվել Կարեն Անդրեասյանի խորհրդականի մոտ: Պարզվում է՝ հայրենի դատական համակարգի անկախության թիվ մեկ երաշխավոր կառույցի անդամների համար դեռ ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանը դիմել է ոստիկանություն եւ 10 հատ օպերատիվ համարանիշներ խնդրել: Բնականաբար, ոստիկանությունը բավարարել է Գագիկ Ջհանգիրյանի խնդրանքը եւ ԲԴԽ-ի 10 անդամներին հատկացրել օպերատիվ համարանիշներ: Ու քանի որ ԲԴԽ անդամների փոփոխությունները հաճախ են լինում վերջին տարիներին, ԲԴԽ որոշ անդամների օպերատիվ հարամանիշները փոխանցվել են նորեկներին՝բացառությամբ մեկի: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ ԲԴԽ նորընտիր նախագահ Կարեն Անդրեասյանը որոշել է, որ ԲԴԽ դատավոր անդամ Արշակ Վարդանյանը, որը «իր սրտի պաշտոնյան» չէ, չի կարող օպերատիվ համարանիշներ ունենալ: Ըստ ամենայնի, հենց նրան «հասանելիք» օպերատիվ համարանիշն է Կարեն Անդրեասյանը տվել իր խորհրդական Արշակ Վարդապետյանին: Իսկ ի՞նչ նպատակ է դա հետապնդում: Դատական համակարգում լուրեր կան, որ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի խորհրդական Արշակ Վարդապետյանը օպերատիվ համարանիշներով հաճախ է լինում տարբեր դատարաններում, հանդիպում դատարանների նախագահների հետ՝ նրանց փոխանցելով Կարեն Անդրեասյանի մեսիջները, թե որ գործով ինչ վճիռ կամ որոշում է անհրաժեշտ քաղաքական իշխանությանը:

Այս տեղեկությունը փորձեցինք պարզել անձամբ Արշակ Վարդապետյանից՝հետաքրքրվելով, թե երբ է ստացել օպերատիվ համարները, եւ արդյոք դատարանների նախագահների մոտ գնալու առաքելության համար է ստացել համարանիշները: «Ժողովուրդ» օրաթերթի այս հարցերին ի պատասխան՝ Արշակ Վարդապետյանը նշեց. «ԲԴԽ գործունեության հետ կապված բոլոր հարցերով խնդրում եմ կապվել ԲԴԽ մամլո ծառայության հետ»: Նա, ըստ էության, հրաժարվեց պատասխանել իրեն առնչվող հարցերին:

Հավելենք, որ ավտոմեքենաների վրա դրվող օպերատիվ համարանիշները հիմնականում անվերահսկելի են, չեն ստուգվում, չեն տուգանվում: Կարճ ասած, կանաչ լույս ունի ՆԳ փոխնախարարի ամուսինը:

ԵՐԱՄԽՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՎԱԾՆԵՐԸ ՀՆԴԻԿՆԵՐ ԵՆ

Վիրավորում ստացողները ազգությամբ հնդիկներ են. այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց Արարատի մարզպետ Սեդրակ Թեւոնյանը:

«Այս պահին գտնվում են Արարատի բժշկական կենտրոնում, ստացել են բեկորային վնասվածք, նրանց կյանքին վտանգ չի սպառնում: Այս պահին ես հիվանդանոցում եմ, վերջիններիս վիրահատում են»,-նշեց մարզպետը:

Նշենք, որ Պաշտպանության նախարարությունից հայտնել էին, որ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, 11:30-ի սահմաններում տարածելով ապատեղեկատվություն այն մասին, թե, իբր, ՀՀ ԶՈՒ-ն կրակ է բացել Երասխի հատվածում տեղակայված ադրբեջանական դիրքերի ուղղությամբ, ստեղծելով տեղեկատվական հիմք, 10-15 րոպե անց՝ ժամը 11:45-ի սահմաններում, նույն ուղղությամբ կրակ է բացել Երասխում օտարերկրյա ներդրումների միջոցով կառուցվող մետալուրգիական գործարանի ուղղությամբ, ինչի հետեւանքով վիրավորում են ստացել օտարերկրյա 2 քաղաքացի:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԵՏԱՁԳՈՒՄԸ

Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների բանակցությունների հերթական փուլը, որը նախատեսված էր այս շաբաթ Վաշինգտոնում, հետաձգվել է ժամանակացույցի հետ կապված խնդիրների պատճառով: Այս մասին հայտարարել է ԱՄՆ Պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Մեթյու Միլլերը:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների քննարկումների հերթական փուլը, որը նախատեսված էր հունիսի 12-ին Վաշինգտոնում, հետաձգվել է Բաքվի խնդրանքով:

«Ցավոք, այս հանդիպումը չկայացավ ժամանակացույցի հետ կապված խնդիրների պատճառով, եւ մենք անհամբեր սպասում ենք, որ այն տեղի կունենա, որքան հնարավոր է, շուտ»,- ասաց Միլլերը:

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ

ՆՈՐ ԲԱՆԱՁԵՎ՝ ԱՐՑԱԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի աշխատանքների արդյունքում Բելգիայի Ֆլամանական խորհրդարանի արտաքին քաղաքականության հանձնաժողովում Արցախի վերաբերյալ բանաձեւ է ընդունվել՝ Ադրբեջանի կողմից արգելափակված Լաչինի միջանցքի անհապաղ բացման եւ Հայաստանի ինքնիշխան տարածքից ադրբեջանական զորքերի դուրսբերման պահանջներով:

ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակից հայտնում են, որ բանաձեւում արձանագրված է, որ Լաչինի միջանցքը Արցախը Հայաստանի Հանրապետության հետ կապող կենսական կարեւոր օղակ է, ինչը արգելափակման է ենթարկվել Ադրբեջանի կողմից: Շրջափակումը հումանիտար ճգնաժամ է առաջացնում Արցախի տեղաբնիկ հայ բնակչության համար եւ խոչընդոտում առաջին անհրաժեշտության պարագաների, մարդասիրական օգնության մուտքն ու տնտեսական հնարավորությունները: Ֆլամանդական խորհրդարանի արտաքին քաղաքականության հանձնաժողովը ընդունում է հարցի հրատապությունը եւ կոչ անում Ադրբեջանին անհապաղ վերացնել շրջափակումը՝ ապահովելով ապրանքների, ծառայությունների հոսքն ու մարդկանց տեղաշարժը միջանցքով:

Ավելին՝ բանաձեւում ընդգծվում է Հայաստանի ինքնիշխան տարածքից ադրբեջանական ուժերի անհապաղ դուրսբերման անհրաժեշտությունը: Նշվում է, որ ինքնիշխան պետության սահմաններում օտարերկրյա ռազմական ուժերի ներկայությունը միջազգային իրավունքի խախտում է եւ ինքնիշխանության սկզբունքների խաթարում: Բանաձեւը կոչ է անում ԵՄ-ին դրդել Ադրբեջանին դադարեցնելու իր թշնամական քաղաքականությունը հայ ժողովրդի դեմ եւ ապահովելու Լեռնային Ղարաբաղի բնակչության իրավունքներն ու անվտանգությունը, որը կանգնած է ցեղասպանության վտանգի առաջ:

Բանաձեւի նախաձեռնող, Ֆլամանական խորհրդարանի անդամ Ալեսիա Քլեյսը, որը ներկայացնում է Նոր ֆլամանական «Ալիանս» կուսակցությունը, անդրադառնալով բանաձեւի ընդունմանը, նկատել է. «Ես շատ գոհ եմ, որ խորհրդարանի արտաքին քաղաքականության հանձնաժողովը հավանություն է տվել հայ-ադրբեջանական հակամարտության՝ ներառյալ Լաչինի միջանցքի փակման եւ հումանիտար իրավիճակի վերաբերյալ մեր բանաձեւին:

Մենք միասնական ենք՝ դատապարտելու շարունակվող պատերազմը, եւ կոչ ենք անում բոլոր կողմերին արդյունավետ քննարկումներում առաջ շարժվել դեպի կայուն խաղաղություն»:

Բանաձեւի քննարկումներ ընթացքում խորհրդարանի անդամ եւ բանաձեւի համահեղինակ Կարլ Վանլաուեն մասնավորապես նշել է. «Այս բանաձեւը հայ համայնքի հետ բազմաթիվ զրույցների եւ ֆլաման լրագրող Յենս Դե Ռեյկի հետ քննարկումների արդյունք է, որին անցած շաբաթ հյուրընկալել էինք հանձնաժողովում: Նա ներկայացրել է Կովկասում ավերիչ հակամարտությունը: Լաչինի միջանցքի ներկայիս շրջափակումը իսկական հումանիտար ճգնաժամ է: Դա պետք է դադարեցվի հիմա»:

Անդրադառնալով բանաձեւին՝ ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը նշել է. «Մենք բարձր ենք գնահատում ֆլաման պատգամավորների աշխատանքը, մասնավորապես՝ նրանց, ովքեր առաջնորդող դեր են խաղացել եւ անխոնջ կերպով հանդես են եկել ադրբեջանական ագրեսիայի, ինչպես նաեւ Արցախում էթնիկ զտումների քաղաքականության դեմ: Արցախի բնիկ հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը հավասար է նրա կյանքի իրավունքին, որը պետք է անզիջում կերպով պաշտպանել»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 14-ին Ազգային ժողովի նիստում պատգամավորները երկրորդ եւ վերջնական ընթերցմամբ հավանություն են տվել գործող օրենքների մի շարք օրենսդրական փոփոխությունների:

Դրանց թվում են.

- «Կամավորական գործունեության մասին» օրինագծերի փաթեթը եւ կից օրենքներում փոփոխությունների կատարումը,
- ««Նախադպրոցական կրթության մասին» օրենքում եւ կից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը:

Բացի այդ, խորհրդարանականներն առաջին ընթերցմամբ հավանություն են տվել մի շարք այլ օրինագծերի:

Դրանց թվում են.

- ««Ոստիկանության մասին» օրենքում եւ կից օրենքներում լրացումներ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը,
- «Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում եւ կից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը,
- ««Սնանդամթերքների անվտանգության պետական վերահսկման մասին» օրենքում եւ կից օրենքներում լրացումներ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը,
- ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրինագիծը,
- ««Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը,
- «Հարկային օրենսգրքում եւ կից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը,
- ««Զբաղվածության մասին օրենքում» փոփոխություններ կատարելու մասին» օրինագիծը,
- ««Ավտոտրանսպորտային միջոցների կայանման տեղական տուրքերի եւ վարչական վարույթների առանձնահատկությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրինագիծը,
- ««Ավտոտրանսպորտով վտանգավոր բեռների եւ չվարակազերծված բեռնարկղերի փոխադրման մասին» օրենքում եւ կից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը,
- ««Տեսաձայնային մեդիաների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը,
- ««Իրավանորմատիվային ակտերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրինագիծը:

Խորհրդարանականները նաեւ վավերացրել են «Եվրասիական վերաապահովագրական ընկերության ստեղծման մասին» պայմանագիրը:

ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ ՉԿԱՆ

ՇՇԻ ՄԵԼՈՆ ՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ԱԺ նախկին պատգամավոր Մելիք Մանուկյանի սպանության փորձի գործով որոշում է կայացրել: Եվ, ահա, մեզ հայտնի դարձավ, որ դատարանը անփոփոխ է թողել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը եւ ճիշտ գտել, որ սպանության փորձի համար մեղադրվողները կապ չունեն միջադեպի հետ, ուստի նրանք արդարացվել են: Ստացվում է, որ այդպես էլ իրավապահները չկարողացան գտնել, թե ով կամ ինչու փորձեց սպանել Շշի Մելոյին. միգուցե Մելիք Մանուկյանը հոգու խորքում շատ լավ գիտի, թե ինչու են ընկել իր հետեւից:



Հիշեցնենք, որ Գլխավոր դատախազությունը բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ դատարան՝ ԱԺ նախկին պատգամավոր, գործարար Մելիք Մանուկյանի՝ Շշի Մելոյի նկատմամբ մահափորձի գործով: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մեղադրող դատախազը պահանջում է, որ նախկին պատգամավորի դեմ մահափորձի գործով մեղադրյալներին դատապարտեն 20 տարի ժամկետով:

Նշենք, որ շուրջ 3 տարի առաջ իրականացված սպանության փորձի գործով արդարացման դատական ակտ էր կայացվել: Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Գոռ Շահբազյանի նախագահությամբ, հրապարակել է վճիռը, համաձայն որի՝ ամբաստանյալներ Արթուր Մխիթարյանը, Ջեմսիկ Մարտիրոսյանը եւ Պետրոս Էլբակյանն արդարացվել են՝ սպանության փորձի, ապօրինի զենք-զինամթերքի եւ գույքի դիտավորության ոչնչացման դրվագներով:

Ամբաստանյալներից մեկը՝ Ջեմսիկ Մարտիրոսյանը, մեղավոր է ճանաչվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի հատկանիշներով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնասվածք պատճառելը) առաջադրված մեղադրանքում՝ դատապարտվելով ազատազրկման՝ 4 տարի 6 ամիս ժամկետով:

Հիշեցնենք, որ Շշի Մելոյի սպանության ենթադրյալ փորձը տեղի է ունեցել 2019թ. օգոստոսի 2-ին Երեւան-Սեւան ավտոճանապարհին՝ Մելիք Մանուկյանին պատկանող ապակե տարաների գործարանի մոտ:

Դեպքի առթիվ հարուցվել էր քրեական գործ՝ ՀՀ ՔՕ-ի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի (Շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձը) եւ ՔՕ 235 -րդ հոդվածի 1-ին կետի (Ապօրինի կերպով զենք-զինամթերք ձեռք բերելը, պահելը) հատկանիշներով: Գործի շրջանակներում կալանավորվել են Շիրակի մարզի բնակիչներ 56-ամյա Արթուր Մխիթարյանը, 53-ամյա Պետրոս Էլբակյանը եւ 45-ամյա Ջեմսիկ Մարտիրոսյանը, որոնք չեն ընդունում առաջադրված մեղադրանքը եւ հերքում են իրենց առնչությունը կատարված դեպքի հետ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐԿԱԾՆԵՐ

ԿԵՆՏՐՈՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՄԿԱԾՅԱԼԻ ԽՈՄՔԸ

Հունիսի 6-ին Երեւանում՝ Բաղրամյան պողոտայից դեպի Ջեյմս Բրայսի փողոց տանող հատվածում՝ թիվ 8-րդ պոլիկլինիկայի հարեւանությամբ սպանված 35-ամյա Վարազդատ Գասպարյանի գործով ձերբակալվել է Հակոբ Ծ.-ն:

Ըստ shamshyan.com-ի՝ Հակոբ Ծ.-ն նախկինում եղել է դատապարտված եւ պատիժը կրել է «Սեւան», ապա՝ «Նուբարաշեն», իսկ հետո՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում:

Մեզ հասած լուրերի համաձայն՝ քրեական պատմություններով հայտնի Գնունեցի Վարազիկի սպանության գործով ձերբակալվածը հրաժարվում է ցուցմունք տալ. ընդամենը բանավոր հասկացրել է իրավապահներին՝ ինչ արել է, լավ է արել, ասելիք չունի: Նշենք, որ իրավապահ համակարգում տարբեր վարկածներ են պտտվում, որ միգուցե Երեւանում քրեական պատմություններով հայտնի Գնունեցի Վարազիկի սպանությունը կապված է այն դեպքի հետ, երբ 2019 թվականի հուլիսի 2-ի գիշերը Նոր Նորքում սպանվել էր «օրենքով գող» 46-ամյա Անդրանիկ Հարությունյանը: Վերջինս քրեական աշխարհում առավել հայտնի է Անդո Խրոմոյ (Կաղ Անդո) կամ Մասիվցի Անդիկ կեղծանուններով: Դեպքից հետո համացանցում հայտնվեց սպանության տեսագրությունը, որտեղ Նոր Նորքի իր տան բակի տաղավարում Անդրանիկ Հարությունյանը նստած է եւս 3 անձի հետ, թղթախաղ են խաղում: Նրանց է մոտենում սեւ հագուստով մի անձ, կրակում տաղավարում գտնվող 4 տղամարդկանց ուղղությամբ: Բանն այն է, որ Գնունեցի Վարազիկի անունը շոշափվել է Անդրանիկ Հարությունյանի դեպքով, եւ նրանցից տարիներ առաջ տեղի ունեցած սպանության համար վրեժխնդիր եղան:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ սպանված Վարազդատ Գասպարյանն անցել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, գործարար Խաչատուր Սուքիասյանի եղբոր՝ Ռոբերտ Սուքիասյանի քրեական գործով:

Մասնավորապես, 2021 թվականին Խաչատուր Սուքիասյանի եղբայրը՝ Ռոբերտ Սուքիասյանը, իր մոտ եղած հրազենից կրակոցներ էր արձակել, ինչի հետեւանքով Հ. Հաբգարյանը ոտքի շրջանում ստացել է հրազենային վնասվածք: Պատգամավորի եղբոր հետ մեղադրյալ էր նաեւ սպանված Վարազդատ Գասպարյանը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈՐԾԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՏԻԿԻՆՆ ՈՒ ԱՆՀԵՏԱՑԱԾ ՈՍԿԵՂԵՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը նախաքննության ավարտ է հայտարարել Նիկոլ Փաշինյանին եւ Աննա Հակոբյանին ոտկանող, շուրջ 4 միլիոն արժողությամբ տարբեր տեսակի ոսկյա զարդերը հափշտակելու քրեական վարույթով: Գործը մտել է դատարան, եւ այն քննելու է դատավոր Սուսաննա Գզողյանը:

Ուշագրավն այն է, որ իրավապահները այդպես էլ չեն կարողացել հայտնաբերել 4 միլիոն արժողությամբ տարբեր տեսակի ոսկյա զարդերը:

Բանն այն է, որ նոյեմբերի 10-ին ՀՀ վարչապետին հատկացված կեցավայր մուտք գործած անձը ոսկյա զարդերը գրավադրել էր գրավատանը եւ ժամանակին չի կատարել գրավադրման պարտավորությունները, գրավատունը այն վաճառել էր: ԱԱԾ-ն հայտնաբերել է գրավատնից այն գնած քաղաքացուն, որն էլ խոստովանել է, որ ինքն էլ գնած ոսկին վերավաճառել է, ու այսպես իրավապահները չեն կարողանում զարդերը հետ վերադարձնել վարչապետի ընտանիքին:

Հիշեցնենք, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 3 տարի անց նոր հանգամանք էր հայտնել 2020 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության, Ազգային ժողովի շենքերում եւ պետական նշանակության այլ օբյեկտներում ու հասարակական վայրերում բռնություն գործադրելու դեպքերով:

Նախաքննությամբ պարզվել է նաեւ, որ Տիգրան Պ.-ն 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, գնացել է Երեւան քաղաքի Զորափի 74 հասցեում գտնվող ՀՀ կառավարական կեցավայրի մոտ եւ միացել այնտեղ հավաքված զանգվածային անկարգությունների մասնակիցներին:

Այնուհետեւ Տ. Պ-ն քայլել է դեպի ՀՀ վարչապետին հատկացված առանձնատուն, մուտք է գործել առանձնատուն, որից հետո զանգվածային անկարգության մի շարք մասնակիցների հետ ներս է մտել առանձնատան 2-րդ հարկում գտնվող ննջասենյակ, բացահայտ հափշտակել է ՀՀ վարչապետի կնոջը՝ Աննա Հակոբյանին պատկանող՝ առանձնապես խոշոր չափերով՝ 3.920.000 ՀՀ դրամ արժողությամբ տարբեր տեսակի ոսկյա զարդերը, այդ թվում՝ զարդատուփի մեջ գտնված ոսկյա ժամացույցը, շղթաները, կախազարդը եւ ապարանջանը: Իհարկե, Տիգրան Պ.-ն կալանավորված է, բայց Աննա Հակոբյանի զարդերը չկան:

Հիշեցնենք, որ պատերազմի ավարտն ազդարարող հրադադարի հայտարարության պահանջներից

դժգոհ քաղաքացիները հենց կեսգիշերին հավաքվեցին կառավարության դիմաց, ապա շարժվեցին կառավարական ամառանոց, որտեղից էլ գողացան վարչապետի կնոջը պատկանող՝ շուրջ 4 մլն արժողությամբ ոսկյա զարդերը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 13-ից 14-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 57 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՒՂԵՎԱՐՁԵՐԻ ԳՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Երեւան-Վանաձոր հեռավորությունը 117 կմ է: Երեւան Վանաձոր եւ հակառակ ուղղությամբ միկրոավտոբուսային երթուղու տոմսի գինը 800 դրամ է, տաքսի ավտոմեքենաներով (երբ 4 ուղեւորներով են հավաքվում, միասին վճարում)՝ 1500 դրամ: Երեւան-Իջեւան հեռավորությունը 136 կիլոմետր է, միկրոավտոբուսային երթուղու տոմսի գինը՝ 1500 դրամ, տաքսի ավտոմեքենաներով՝ 2500 դրամ, Երեւան-Դիլիջան հեռավորությունը 90 կմ է, միկրոավտոբուսային երթուղու տոմսի գինը՝ 1000 դրամ, տաքսի ավտոմեքենաներով՝ 2000-2500 դրամ: Գրեթե նույն հեռավորության դեպքում իջեւանցիները գրեթե երկու անգամ ավել են վճարում, քան վանաձորցիները: Իջեւանցիները կրկնակի հարո՞ւստ են վանաձորցիներից, որ մայրաքաղաք Երեւան հասնելու եւ այնտեղից վերադառնալու համար Վանաձորի բնակիչներից գրեթե կրկնակի են վճարում:

473 ՏՈՒՆ ՎԹԱՐԱՅԻՆ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել մարզի համայնքներում հողի սողանքի հետեւանքով 3-րդ եւ 4-րդ կարգի վթարային տների թվի վերաբերյալ: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է որ Իջեւան քաղաքում առկա է 4-րդ կարգի վթարային 5 տուն, Իջեւան համայնքի Գանձաքար գյուղում՝ վթարային 3-րդ կարգի 29, 4-րդ կարգի՝ 13 տուն, Ներքին Ծաղկավան գյուղում՝ 4-րդ կարգի վթարային 3 տուն, Ակնաղբյուր գյուղում՝ 3-րդ կարգի վթարային 22, 4-րդ կարգի վթարային 43 տոն, Սեւքարում՝ 3-րդ կարգի վթարային՝ 22, 4-րդ կարգի՝ 12 տուն, Աչաջուր գյուղում՝ 3-րդ կարգի վթարային՝ 31 , 4-րդ կարգի՝ 28 տուն, Գետահովիտ գյուղում՝ 3-րդ կարգի վթարային 67, 4-րդ կարգի՝ 8 տուն, Խաշթառակում՝ 3-րդ կարգի վթարային 40, 4-րդ կարգի՝ 7 տուն, Սարիգյուղում՝ 3-րդ կարգի 1, Այգեհովվտում՝ 3-րդ կարգի վթարային՝ 2 տուն: Դիլիջան քաղաքում առկա է սողանքից 4-րդ կարգի վթարային 5, Դիլիջան համայնքի Հաղարծին գուղում՝ 4-րդ կարգի 3 տուն, Գոշ գյուղում՝ 3-րդ կարգի 14, 4-րդ կարգի՝ 11 տուն, Աղավնավանքում՝ 3-րդ կարգի 2, Թեղուտում՝ 4-րդ կարգի 1 տուն, Հովքում՝ 3-րդ կարգի վթարային՝61, 4-րդ կարգի՝35 տուն: Նոյեմբերյան քաղաքում առկա է 4-րդ կարգի վթարային 6, Նոյեմբերյան համայնքի Կողբ եւ Կոթի գյուղերում՝ 4-րդ կարգի մեկական տուն: Ընդհանուր առմամբ Տավուշի մարզում առկա է վթարային 3-րդ կարգի 289, 4-րդ կարգի՝ 184 տուն: Վթարային տների խնդիրը լուծելու համար տարիներ շարունակ պետական բյուջեից ֆինանսական հատկացումներ չեն արվում, հիմնահարցը չի լուծվում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը երեկ ներկա է եղել «Թուրինյան գործընթաց. դեպի ցկյանս ուսումնառություն» ազգային մեկնարկային հանդիպմանը:

Հայաստանը Թուրինյան գործընթացի նոր փուլի ակտիվ մասնակիցն է. գործընթացի մեկնարկը տվել է Եվրոպական կրթական հիմնադրամը (ԵԿՀ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրթական եւ ուսումնական համակարգերի ցկյանս հեռանկարների մշտադիտարկմանը եւ ցկյանս ուսումնառության հայեցակարգի փոփոխությանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը շնորհակալություն է հայտնել եվրոպացի գործընկերներին՝ ի դեմս Եվրոպական կրթական հիմնադրամի, ցկյանս կրթության հայեցակարգի եւ ուսումնառության, գործող մեխանիզմների վերաբերյալ Հայաստանում իրականացրած մշտադիտարկման եւ ստացված արդյունքների համար:

«Մշտադիտարկման շնորհիվ հնարավորություն ունենք արձանագրելու բոլոր խնդիրներն ու ձեռքբերումները եւ դրանց հիման վրա սկսելու գործընթացի երկրորդ փուլը: Սա նաեւ հնարավորություն է հայեցակարգում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու եւ մեր քաղաքացիների ապահովելու ցկյանս ուսումնառության առավել բարենպաստ պայմաններ»,- ասել է Արաքսիա Սվաջյանը:

Փոխնախարարը գործընթացի իրականացումը կարեւորել է թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ կրթական ոլորտների համար՝ որպես հնարավորություն տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց կարողությունները զարգացնելու կամ կյանքի ցանկացած փուլում նոր մասնագիտություն ընտրելու եւ ներուժը երկրի տնտեսության զարգացմանն ուղղելու տեսանկյունից:

Աշխատաժողովին ողջույնի խոսքով հանդես են եկել նաեւ Համագործակցության բաժնի ղեկավար, Հայաստանում ԵՄ պատվիրակության ներկայացուցիչ Ֆրանկ Հեսսը, ԿԳՄՍՆ նախնական /արհեստագործական/ եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետ, Թուրինյան գործընթացի ազգային համակարգող Արմենուհի Պողոսյանը, ԵԿՀ Մարդկային կապիտալի զարգացման ավագ մասնագետ Միհայլո Միլովանովիչը: Միջոցառման ընթացքում ներկայացվել եւ քննարկվել են Թուրինյան գործընթացի կողմից Հայաստանում ՄԿՈ հայեցակարգի եւ դրա համակարգային առաջընթացի մշտադիտարկման արդյունքները: Միջոցառումը դարձել է նաեւ Թուրինյան գործընթացի կողմից Հայաստանում ցկյանս ուսումնառության հայեցակարգի ուսումնասիրության եւ գործընթացի հետագա փուլերում Հայաստանը ներգրավելու մեկնարկ:

ԿԳՄՍՆ նախնական /արհեստագործական/ եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արմենուհի Պողոսյանի խոսքով՝ Հայաստանը 2010 թվականից միացել է Թուրինյան գործընթացին. «Սա մեզ համար շատ կարեւոր գործիք է, որի շնորհիվ կարողանում ենք վերլուծել ու գնահատել ՄԿՈ ոլորտում արձանագրված առաջընթացը եւ որի հիման վրա նախանշում ենք բոլոր բարեփոխումներն ու ծրագրերը: Թուրինյան գործընթացի նախորդ տարիների վերլուծական փաստաթղթերը եւ զեկույցները մեծապես նպաստել են «ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրի» եւ գործողությունների պլանի մշակման գործընթացին, ինչպես նաեւ օգնել՝ հստակ գնահատելու, թե ինչ ունենք եւ ինչպես պետք է շարժվենք առաջ մեր նպատակների իրագործման համար»:

Արմենուհի Պողոսյանը կարեւորել է Եվրոպական կրթական հիմնադրամի մշտական աջակցությունը Հայաստանում ՄԿՈ համակարգի զարգացմանը՝ իրականացնելով մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են թե՛ բովանդակության, թե՛ կառավարման բարելավմանը, թե՛ սոցիալական գործընկերության զարգացմանը եւ թե՛ ՄԿՈ ոլորտում ինստիտուցիոնալ համակարգի ներդրմանը:

Հայաստանում ԵՄ պատվիրակության եւ Եվրոպական կրթական հիմնադրամի ներկայացուցչները բարձր են գնահատել Հայաստանի մասնակցությունը Թուրինյան գործընթացին՝ ընդգծելով, որ մեր երկրում ստեղծված են բավական լավ հնարավորություններ ՄԿՈ համակարգի գրավչության բարձրացման ու մարդկանց ներգրավվածության ապահովման համար:

ՕՐԱԿԱՐԳ

ԹՈՒՆԵԼԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԻՏԱԼԱԿԱՆ ՓՈՐՁ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանը, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ղեկավար Գոռ Ավետիսյանը հունիսի 12-ից գտնվում են Իտալիայի Հանրապետությունում:

ՏԿԵՆ-ից հայտնում են, որ այցի նպատակն էր ծանոթանալ Իտալիայի ճանապարհային ենթակառուցվածքներին, մայրուղիների, թունելների շինարարությանը, դրանց պահպանման եւ շահագործման մեխանիզմներին, ճանապարհային ցանցի կառավարման համակարգերին:

Այցը նպատակ է հետապնդում խորացնել համագործակցությունը ճանապարհաշինության ոլորտում, բարելավել հայ-իտալական ճանապարհային ենթակառուցվածքների փորձի փոխանակումը:

Հունիս 12-ին հայկական պատվիրակությունը Azienda Nazionale Autonoma delle Strade կազմակերպության հետ այցելել է 2,6 կմ երկարությամբ Tempio di Giove թունել: Տեղում ծանոթացել են թունելի շինարարության նորմերին, պահանջներին:

Նախարարին են ներկայացվել թունելաշինության ոլորտում իտալական փորձը, մեթոդները:

ԹՈՇԱԿԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է

Երեկ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը հայտարարեց, որ հուլիսի 1-ից կենսաթոշակները կբարձրանան քիչ աշխատանքային փորձ ունեցողների համար 4400 դրամով, իսկ 10 տարուց ավելի ստաժ ունեցողների համար՝3000 դրամով:

«Հուլիսի 1-ից թոշակի նվազագույն չափը կդառնա 36 000 դրամ, ներկայիս 31 600-ի փոխարեն, այսինքն՝ կլինի 4400 դրամի ավելացում: Շատ տարիների ստաժ ունեցողների համար ավելացումը կլինի 3000 դրամով. ինչո՞ւ, որովհետեւ մեծ թիվ են կազմում մինչեւ 10 տարի ստաժ ունեցող քաղաքացիները, որոնք խնդիր ունեն իրենց ծախսերը համապատասխանեցնելու պարենային զամբյուղին»,- ասել էր նախարարը:

Սակայն հարց է առաջանում՝ ավելացված 3000-4000 դրամը որեւէ կերպ նպաստո՞ւմ է, որպեսզի թոշակառուն կարողանա գնել պարենային զամբյուղի նվազագույն ապրանքները, թե՞ ոչ:

Նախարարի հայտարարությունից հետո «Ժողովուրդ» օրաթերթը բազմաթիվ ահազանգեր է ստացել քաղաքացիներից, որոնք նշում են, որ 36.000 դրամ թոշակով անհնար է գոյատեւել: Այդ գումարը անգամ չի բավարարում թոշակառուներին գնել ամսվա համար անհրաժեշտ դեղամիջոցների խմբաքանակը, իսկ պարենային զամբյուղը լցնելու մասին խոսք անգամ չի կարող գնալ:

Քաղաքացիների խոսքով՝ սա չնչին ավելացում է եւ գրեթե ոչ մի կերպ չի օգնի լուծել իրենց կենցաղային հարցերը, մանավանդ՝ այն դեպքում, երբ Հայաստանում թանկացումների ալիքը շարունակվում է եւ նվազելու միտում չունի:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԵԼՔ ՈՒ ՄՈՒՏՔ

ՎԻԶԱՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳ

ԵՄ խորհրդի եւ Եվրախորհրդարանի բանակցողները համաձայնեցրել են թվային շենգենյան վիզաների սահմանման նոր դրույթը, որոնք ապագայում հնարավոր կլինի ստանալ օնլայն: Այս մասին ասվում է խորհրդի մամուլի ծառայության հայտարարության մեջ:

«Այս դրույթը հնարավորություն է տալիս վիզա ստանալու համար դիմել առցանց, ինչպես նաեւ այժմ օգտագործվող կպչուն պիտակը փոխարինում է թվային վիզայով»,-ասվում է հայտարարության մեջ:

Եվրախորհրդում վստահեցնում են, որ այս նախաձեռնությունը կդյուրացնի շենգենյան վիզայի ստացումը՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ կուժեղացնի անվտանգությունը շենգենյան տարածքում:

Ինչպես նշել են ԵՄ խորհրդում, առաջարկն ուժի մեջ մտնելուց հետո կստեղծվի հատուկ միասնական առցանց հարթակ, որի միջոցով կիրականացվեն դիմումների ներկայացումը եւ էլեկտրոնային վիզաների տրամադրումը, ինչը զգալիորեն կհեշտացնի ընթացակարգը ինչպես ճանապարհորդների, այնպես էլ հյուպատոսական ծառայությունների համար:

Հաղորդվում է նաեւ, որ դիմորդները, այնուամենայնիվ, ստիպված կլինեն անձամբ ներկայանալ հյուպատոսություն այն դեպքում, եթե շենգենյան վիզայի հայտը ներկայացվում է առաջին անգամ, եւ իշխանությունները պահանջում են ստանալ դիմողի կենսաչափական տվյալները, ինչպես նաեւ եթե կենսաչափական տվյալներն այլեւս անվավեր են: Բացի այդ, անձնական ներկայությունը անհրաժեշտ կլինի այն դեպքում, եթե ձեռք բերվի նոր փաստաթուղթ, որով դիմումատուն ճանապարհորդում է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արթուր Հրանտի Գրիգորյանը կորցրել է իր դիպլոմը՝ տրված Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի կողմից 1989թ.-ին: Ավարտել է Մարզչական ֆակուլտետը:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ ՄԵԾԱՑԵԼ Է

ՄԱԿ-ի 2022 թվականի տվյալներով՝ ամբողջ աշխարհում 108,4 միլիոն մարդ ստիպված է եղել լքել իր բնակավայրը ռազմական հակամարտությունների, հետապնդումների, բռնությունների եւ մարդու իրավունքների խախտումների պատճառով: Այս ցուցանիշը տասներորդ անգամ անընդմեջ աճել է մինչեւ առավելագույն արժեք. մեկ տարի առաջ այն գրեթե 20 միլիոնով ցածր էր:

2023 թվականի մայիսին ամբողջ աշխարհում փախստականների թիվը կարող է հասնել 110 միլիոնի: Այս մասին ասվում է հունիսի 14-ին հրապարակված ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի վարչության (ՄԱԿ ՓՀԳ) «Գլոբալ միտումները» ամենամյա զեկույցում:

Այս ցուցանիշի կտրուկ աճի գլխավոր պատճառը Ռուսաստանի կողմից Ուկրաինայի դեմ սանձազերծված պատերազմն է: Ուկրաինայից փախստականների թիվը 2021 թվականի վերջին 27 300-ից 2022 թվականի վերջին հասել է 5,7 միլիոնի: ՄԱԿ ՓՀԳ-ի տվյալներով՝ խոսքը Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր արտագաղթի ամենաարագ ալիքի մասին է: Բացի այդ, 2022 թվականին ամբողջ աշխարհում տեղահանվածների թվի աճը բացատրվում է Աֆղանստանից փախստականների ենթադրյալ ցուցանիշների վերահաշվարկով, ինչպես նաեւ ռազմական այլ հակամարտություններով, հատկապես՝ Սուդանում:

Ընդ որում, փախստականների մեծ մասն ընդունել են աշխարհի ոչ ամենահարուստ երկրները: Հարկադրված միգրանտների ավելի քան հինգերորդը գտնվում է 46 առավել թույլ զարգացած պետություններում, որոնց բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 1,3 տոկոսից պակասը. նշում է ՄԱԿ-ը:

Զեկույցի համաձայն՝ 2022 թվականին ավելի քան 339 հազար փախստական է վերադարձել հայրենիք՝ 38 պետություն, մասնավորապես՝ Հարավային Սուդան, Սիրիա, Կամերուն եւ Կոտ դ՛Իվուար: Ներքին տեղահանվածների թվում իր բնակավայր է վերադարձել 5,7 մլն մարդ, այդ թվում՝ Եթովպիա, Մյանմար, Սիրիա, Մոզամբիկ եւ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

Արմեն Վալերիի Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 04.07.2023 թվականին ժամը 15:00-ին ք.Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍնԴ/1328/04/20 սնանկության գործով 22.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված Արմեն Վալերիի Մկրտչյանի ստորեւ նշված անշարժ գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 1 - Պարտապանի պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Ջուլիետտա Հրաչյայի Մեսրոպյանին, Սերգեյ Հրաչյայի Մեսրոպյանին եւ Հայաստան Արսենի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ օգտին գրավադրված ՀՀ, Երեւան, Աջափնյակ, Սիսակյան փողոց 18բ շենքի թիվ 5 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, (մակերեսը՝ 63,2քմ, հարկայնությունը՝ 9/2 սեփականության իրավունքի վկայական՝ 11092012-01-1122, կադաստրային ծածկագիր՝ 01-001-0021-0001-014-005):

Մ Մեկնարկային գին՝ 24,800,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում է գրավի առարկա: Գույքը ծանրաբեռնված է բնակիչներով, որոնք գույքի ձեռք բերման դեպքում ենթակա են վտարման: Z

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 200,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման Արմեն Վալերիի Մկրտչյանի սնանկության գործով թիվ 2480103340300000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com):

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՓԱՌԱՏՈՆ

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆԸ» ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է

Երեւանի «Ոսկե ծիրան» հոբելյանական 20-րդ միջազգային կինոփառատոնն այս տարի տեղի կունենա հուլիսի 9-16-ը: Այս տարի եւս միջազգային կինոտոնը հանդիսատեսին կներկայացնի մրցութային կինոնկարներ աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ «Երեւանյան պրեմիերաներ» ծրագրով կցուցադրվեն ֆիլմեր ամենահեղինակավոր (Կաննի, Բեռլինի, Վենետիկի եւ այլն) կինոփառատոններից: Հայաստան կժամանեն կինոյի համաշխարհային դեմքեր, որոնք իրենց փորձն ու արվեստը կներկայացնեն կինոսերներին:

«Ոսկե ծիրան»-ը այս տարի նշում է ստեղծման 20-րդ հոբելյանը: Բացի այդ, այս տարի նշվում է հայ կինոյի 100-ամյակը, եւ փառատոնն առանձնահատուկ անդրադարձ կունենա այդ երկու հոբելյաններին:

Փառատոնի բացման հանդիսավոր արարողությունը կկայանա հուլիսի 9-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Երեւանի կինոյի տունը եւ «Մոսկվա» կինոթատրոնը փառատոնի անցկացման հիմնական վայրերն են: Ավանդական ռանդեվուները կանցկացվեն ՀԲԸՄ-ում:

Փառատոնի բացումը կազդարարվի ռեժիսոր Ջեսիկա Վուդվորթի «Լուկա» (Բելգիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Բուլղարիա, Հայաստան) ֆիլմով, որի պրեմիերան կայացել է Ռոտերդամի փառատոնում: Ֆիլմում Ջերալդին Չապլինի հետ գլխավոր դերերից մեկը կերտել է դերասան Սամվել Թադեւոսյանը:

Փառատոնի փակմանը կցուցադրվի կանադահայ ռեժիսոր Ատոմ Էգոյանի «Օրացույցը» ֆիլմի նոր գունաշտկված տարբերակը՝ ֆիլմի ստեղծման 30-ամյակի առթիվ:

Փառատոնին կցուցադրվեն երկու տասնյակից ավելի հայկական ֆիլմեր՝ տարբեր անվանակարգերում, որոնց զգալի մասը ստեղծվել են Հայաստանի ազգային կինոկենտրոնի աջակցությամբ, այդ թվում՝ բացման ֆիլմը: Կներկայացվի նաեւ հայ կինոյի 100-ամյակին նվիրված հատուկ ծրագիր:

Փառատոնի շրջանակում տեղի կունենա իրանական կինոյի նշանավոր վարպետներից մեկի՝ Սամուել Խաչիկյանի ֆիլմերի առաջին հետահայաց ցուցադրությունը Հայաստանում:

Փառատոնի լիամետրաժ մրցույթի ժյուրիի կազմը գլխավորում է Վենետիկի կինոփառատոնի «Ոսկե առյուծի» դափնեկիր, ֆիլիպինցի ճանաչված ռեժիսոր Լավ Դիասը: «Կորիզ» կարճամետրաժ մրցութային ծրագրի ժյուրիի նախագահն է օսկարակիր պրոդյուսեր Ջերեմի Թոմասը:

Փառատոնի պատվավոր հյուրերից են Կաննի կինոփառատոնի «Ոսկե արմավենու» ճյուղի կրկնակի դափնեկիրներ Դարդեն եղբայրները, ինչպես նաեւ Լոկառնոյի կինոփառատոնի «Ոսկե հովազի» դափնեկիր, պորտուգալացի ռեժիսոր Պետրո Կոշտան, որը փառատոնի ընթացքում կանցկացնի հատուկ աշխատարան «Կորիզ» կարճամետրաժ մրցութային ծրագրի ֆիլմերի հեղինակների հետ:

Փառատոնի հատուկ հյուրերից են Կաննի կինոփառատոնի «Հատուկ հայացք» ծրագրի գլխավոր մրցանակակիր, ղազախստանցի ռեժիսոր Սերգեյ Դվորցեւոյը, Կաննի կինոփառատոնի հետխորհրդային տարածաշրջանի գլխավոր խորհրդատու Ժոել Շապրոնը:

Կինոփառատոնի Gaiff Pro կրթական եւ արտադրական հարթակը, որը, ինչպես միշտ, կանցկացվի փառատոնի օրերին, առաջին անգամ կաջակցի ոչ միայն լիամետրաժ, այլեւ կարճամետրաժ կինոյին:

Փառառոնն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: Երեւանի քաղաքապատերազմը փառատոնի գլխավոր հովանավորն է:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԿՏԱՎՆԵՐ՝ ՇՈՇԱՓԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

«Խոսող կտավներ» ներառական նախագծի շրջանակում տեսողության խնդիրներ ունեցող մարդիկ հնարավորություն կունենան «տեսնել» Մարտիրոս Սարյանի 6 կտավ:

«Սարեր» մշակութային կազմակերպությունն ու Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանը հնարավորություն կընձեռեն դիպչել թանգարանի հավաքածուի ցուցանմուշների պատճեններին եւ թույլ կտան զուգահեռաբար ունկնդրել, թե ինչ է պատկերված տվյալ նկարներում: Ծրագրի պաշտոնական բացման արարողությունը կկայանա հունիսի 30-ին Սարյանի տուն-թանգարանում:

Ցանկացած թանգարանում արգելված է դիպչել ցուցանմուշներին, մինչդեռ հենց շոշափելիքի զգայարաններն են ծառայում տեսողության խնդիրներ ունեցող մարդուն որպես պատուհան, որից նա տեսնում է աշխարհը: «Խոսող կտավներ» ներառական նախագծի նպատակը տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց բարձր արվեստի աշխարհ ներգրավելն է: Ծրագրի շրջանակում ստեղծվել են թանգարանի հավաքածուից 6 գլուխգործոցի շոշափելի կրկնօրինակներ՝ « Պաննո «Հայաստան»» (1964), «Արագած» (1925), «Կոստանդնուպոլսի շները» (1910), «VII դարի Կարմրավոր եկեղեցին. Աշտարակ» (1956), «Դեպի աղբյուր» (1928), «Երեւանյան բակը գարնանը» (1928): Շոշափելի նկարը կտավի ռելիեֆային պատկերն է, որը պատրաստվում է հիպոալերգեն պլաստիկից: Շոշափելի պատճենը տեսողության խնդիրներ ունեցող մարդուն թույլ է տալիս զանազանել նկարում պատկերված հերոսների դիմագծերն ու հագուստը, բնապատկերի դետալները:

ԱՇԽԱՐՀ

ՆՈՐ ՀԱՄԱԶԳԵՍՏ

Իսպանիայի փոխչեմպիոն Մադրիդի «Ռեալը» ներկայացրել է նոր համազգեստը, որով հաջորդ մրցաշրջանում կանցկացնի տնային հանդիպումները:

Արքայական ակումբի տեխնիկական հովանավորը Adidas ընկերությունն է:

YouTube–Ի ՆՈՐ ԹԱՐՄԱՑՈՒՄԸ

YouTube վիդեոհոսթինգը պարզեցրել է գործընկերային ծրագրին (Youtube Partner Program) մասնակցելու պայմանները, որը թույլ է տալիս գումար վաստակել տեսանյութերում գովազդի եւ այլ գործիքների միջոցով. այս մասին հայտնում է The Verge-ը:

Այժմ Youtube Partner Program-ին միանալու համար բավական է ունենալ 500 բաժանորդ եւ 3000 ժամ դիտում վերջին 12 ամիսների ընթացքում: Նախկինում այս ցուցանիշները համապատասխանաբար կազմում էին 1000 բաժանորդ եւ 4000 ժամ դիտում:

Բացի դրանից, YouTube-ն իջեցրել է TikTok-ի հետ մրցակցող Shorts տեսանյութերի դրամայնացման ծրագրին հասանելիություն ունենալու շեմը: Այժմ բավական է վերջին 90 օրվա ընթացքում 3 միլիոն դիտում հավաքել, մինչդեռ նախկինում պահանջվում էր 10 միլիոն դիտում:

Նոր կանոնները շուտով ուժի մեջ կմտնեն հինգ երկրում՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Թայվանում եւ Հարավային Կորեայում: YouTube-ը նախատեսում է ապագայում դրանք ընդլայնել այլ տարածաշրջաններում:

Ավելի վաղ պարզ էր դարձել, որ YouTube-ն այլեւս թույլ չի տա տեսանյութեր դիտել, եթե տվյալ օգտատիրոջ բրաուզերում տեղադրված է գովազդն արգելափակող ծրագիր, օրինակ՝ AdBlock-ը: Նման արգելափակում հայտնաբերելու դեպքում ծառայությունը թույլ չի տա դիտել տեսանյութը եւ կտեղեկացնի, որ նման տեխնոլոգիաների օգտագործումն անթույլատրելի է:

Մայիսին տեղի ունեցած YouTube Brandčast ամենամյա միջոցառման ժամանակ Google-ը հայտարարել էր, որ գովազդային նոր ձեւաչափ է գործարկում. այսուհետ խելացի հեռուստացույցներում YouTube հավելվածից օգտվողներին կցուցադրվի 30 վայրկյան տեւողությամբ գովազդային տեսանյութեր՝ առանց դրանք բաց թողնելու հնարավորությամբ:

● Հունիսի 16-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Մուսա լեռան 40 օրը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԲՈՂՈՔ

ՀԱՐՑ. Քանի՞ օրում կստանամ հարկադիր ուղարկած իմ բողոքի պատասխանը:

Գեղամ Գալստյան (55 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ծառայությունում ստացված դիմումների, բողոքների կամ հարցումների պատասխանների տրամադրման ժամկետը կարող է լինել տարբեր՝ կախված դիմումի բովանդակությունից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համատեքստում ներկայացվող՝ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում,

2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում,

3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝30-օրյա ժամկետում, որի մասին հարցումը ստանալուց հետո՝5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից վարչական վարույթի հարուցման հիմք հանդիսացող դիմումների կամ բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթն ավարտվում, եւ վարչական ակտը կայացվում է դիմումի ներկայացման փաստով վարչական վարույթի հարուցումից հետո՝ 30-օրյա ժամկետում, բացառությամբ օրենքով նախատեսված հիմքերով վարչական վարույթի ժամկետի երկարաձգման դեպքերի:

Հարկադիր կատարողի կողմից որոշակի որոշման կայացման հիմք հանդիսացող փաստական հանգամանքներ եւ/կամ ապացույցներ ներառող դիմումների ներկայացման դեպքում հարկադիր կատարողի կողմից այդ դիմումի հիման վրա համապատասխան որոշումը կայացվում է դրա համար հիմք հանդիսացող հանգամանքները հարկադիր կատարողին հայտնի դառնալու (դիմումը ստացվելու) օրվանից եռօրյա ժամկետում, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՐՑ. «Էվոկա»-ում պարտատոմսերի գրավով վարկ վերցնել կարո՞ղ եմ:

Լիլիթ Միքայելյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, կարող եք:

Ինչպես եւ ավանդի դեպքում, պարտատոմսերի դեպքում եւս կարելի է պարտատոմսերի գրավով վերցնել կարճաժամկետ վարկ:

«Էվոկա» բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկը տրամադրվում է առավելագույնը պարտատոմսի մարման ժամկետով՝ պարտատոմսի արժեկտրոնային տոկոսադրույք՝ +2%, այսինքն՝ ՀՀ դրամով՝ 12%, ԱՄՆ դոլարով՝ 7.5% տարեկան անվանական տոկոսադրույքով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւանում՝ Էրեբունի վարչական շրջանի գլխավոր մայրուղու վրա գտնող երթուղիների սպասասրահը գտնվում է անբարեկարգ վիճակում: Քաղաքացիները չեն կարողանում նստել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+5 +10 +19 +23
Կոտայքի լեռներ	+5 +9 +19 +22
Կոտայքի նախալեռներ	+13 +15 +23 +25
Գեղարքունիք	+7 +10 +19 +22
Լոռի	+7 +12 +19 +22
Տավուշ	+10 +15 +22 +25
Արագածոտնի լեռներ	+5 +9 +18 +22
Արագածոտնի նախալեռներ	+12 +15 +22 +26

Մարզ	Ջերմաստիճան
Արարատ	+15 +18 +26 +28
Արմավիր	+14 +16 +26 +28
Վայոց ձորի լեռներ	+7 +10 +18 +21
Վայոց ձորի նախալեռներ	+15 +18 +26 +28
Սյունիքի հովիտներ	+15 +19 +25 +29
Սյունիքի նախալեռներ	+2 +12 +18 +21
Արցախ	+15 +19 +25 +28
Երեւան	+16 +19 +25 +27

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*